Հավելված 2

Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի խորհրդի

2017 թվականի –ի որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույնով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բարեկամական խմբերի (այսուհետ՝ Բարեկամական խմբեր) գործունեության հետ կապված հարաբերությունները՝ նպատակ ունենալով ապահովելու Բարեկամական խմբերի գործունեության արդյունավետությունը:

2. Բարեկամական խմբերն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումով, Ազգային ժողովի խորհրդի որոշումներով, Ազգային ժողովի նախագահի որոշումներով և կարգադրություններով:

3. Բարեկամական խմբերի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձնական պատասխանատվության, գործընկերային կապեր հաստատելու, բարեկամության և համագործակցության, նախաձեռնողականության, հաշվետվողականության, շարունակականության, հետևողականության և մասնակցային սկզբունքներին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության շահերն իրացնելու և գործընկերային կապեր ձեռք բերելու կամ դրանք ամրապնդելու նպատակով Բարեկամական խմբի անդամները տվյալ երկրների քաղաքական խմբերի, կուսակցական խմբակցությունների հետ հարաբերություններում ցուցաբերում են մասնակցություն, ակտիվություն և նախաձեռնողականություն:

5. Բարեկամական խմբի անդամները պարտավոր են հնարավորինս ակտիվ գործունեություն ծավալել տվյալ ձևաչափում:

6. Հայաստանի Հանրապետության շահերին առնչվող հարցերի վերաբերյալ Բարեկամական խմբի անդամները պարտավոր են նախապես մշակել հստակ մարտավարություն և հետևողական աշխատանք տանել դրա իրականացման ուղղությամբ (երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի, դիրքորոշումների մշակում, գործընկերների ներգրավում, պատասխանատվության բաշխում և այլն): Այդ նպատակով Բարեկամական խմբի ղեկավարի նախաձեռնությամբ պարտադիր հրավիրվում է աշխատանքային խորհրդակցություն:

7. Բարեկամական խմբում ներգրավված պատգամավորները պետք է մշտապես շփումների մեջ լինեն տվյալ երկրների բարեկամական խմբերի, լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հայկական համայնքների, հասարակական և կրոնական կազմակերպությունների հետ:

8. Բարեկամական խմբի այցերի շրջանակներում տեղի ունեցող հանդիպումներին մասնակցելու նպատակով գործուղվող Բարեկամական խմբի կազմը Բարեկամական խմբի ղեկավարը գրավոր համաձայնեցնում է Ազգային ժողովի նախագահի հետ՝ ելնելով Բարեկամական խմբի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունից:

9. Բարեկամական խմբերի այցերի մասին Բարեկամական խմբերի ղեկավարները գրավոր տեղեկացնում են Ազգային ժողովի նախագահին, ինչպես նաև Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ միջոցառման անցկացման նախատեսված օրվանից ոչ ուշ, քան 21 օր առաջ: Բացառություն են կազմում նախապես չծրագրված միջոցառումները և հանդիպումները:

10. Բարեկամական խմբերի ղեկավարներին (անհրաժեշտության դեպքում՝ նրանց փոխարինողներին) նշանակում է Խորհուրդը՝ համապատասխան Բարեկամական խմբի կազմից:

11 Գործուղվող Բարեկամական խմբի կազմը որոշում է Բարեկամական խմբի ղեկավարը՝ խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և Հանձնաժողովի նախագահի հետ:

12. Բարեկամական խմբերի ղեկավարները կազմակերպում և համակարգում են համապատասխան Բարեկամական խմբի աշխատանքները, ինչպես նաև իրականացնում սույն կարգով նախատեսված այլ գործառույթներ:

13. Բարեկամական խմբի քարտուղարին նշանակում է Ազգային ժողովի նախագահը՝ Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան վարչության աշխատակիցներից՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

14. Բարեկամական խմբի քարտուղարն իրականացնում է Բարեկամական խմբի գործավարությունը, սույն կարգով սահմանված գործառույթներ, ինչպես նաև կատարում Բարեկամական խմբի ղեկավարի հանձնարարականները:

15. Բարեկամական խմբերում ընդգրկված Ազգային ժողովի պատգամավորների մասնակցությունը Բարեկամական խմբի հետագա աշխատանքներին դադարեցվում է, եթե՝

1) տվյալ պատգամավորն այդ մասին գրավոր դիմել է Խորհրդին.

2) դադարել կամ դադարեցվել են նրա պատգամավորական լիազորությունները.

3) պատգամավորը չի կատարում սույն կարգով սահմանված պահանջները.

4) խմբակցությունը հետ է կանչում իր առաջարկած և Պատվիրակության կազմում ընդգրկված խմբակցության պատգամավորին.

5) պատգամավորի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Սույն կետով նախատեսված դեպքերում խմբակցությունը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնում է համապատասխան թեկնածություն:

16. Բարեկամական խմբի քարտուղարը Բարեկամական խմբի անդամներին, որպես կանոն, գործուղումից առնվազն 14 օր առաջ տրամադրում է Բարեկամական խմբի քննարկման ենթակա հարցերին առնչվող նյութեր և տեղեկանքներ:

17. Ազգային ժողովի նախագահի կամ Բարեկամական խմբի ղեկավարի նախաձեռնությամբ Բարեկամական խմբի գործուղումից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ հրավիրվում է աշխատանքային խորհրդակցություն՝ Հանձնաժողովի նախագահի և Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների մասնակցությամբ:

18. Աշխատանքային խորհրդակցությանը կարող են հրավիրվել արտաքին գործերի նախարարի՝ համապատասխան ուղղությունը համակարգող տեղակալը և (կամ) արտաքին գործերի նախարարության աշխատակազմի համապատասխան վարչության պետը, շահագրգիռ պետական կառավարման մարմինների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ:

19. Բարեկամական խմբի աշխատանքների արդյունավետությունն ապահովելու, Բարեկամական խմբի անդամների գործողությունները համակարգելու և կազմակերպական հարցերը քննարկելու նպատակով Բարեկամական խմբի ղեկավարները կազմակերպում և անցկացնում են խորհրդակցություններ:

20. Բարեկամական խմբի խորհրդակցությունները վարում է Բարեկամական խմբի ղեկավարը կամ նրան փոխարինողը: Բարեկամական խմբի ղեկավարի հանձնարարությամբ Բարեկամական խմբի խորհրդակցությունները սահմանված կարգով արձանագրվում և պահպանվում են: Բարեկամական խմբի խորհրդակցությունների արձանագրությունն ստորագրում են նիստը վարողը և Բարեկամական խմբի քարտուղարը:

21. Բարեկամական խմբի խորհրդակցությունների ընթացքում Բարեկամական խմբի ղեկավարը խորհրդակցությունների ընթացքի, խորհրդակցությունում ընդունված որոշումների կամ Հայաստանի Հանրապետության շահերին առնչվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում Ազգային ժողովի նախագահին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

22. Օտարերկրյա պետություն գործուղման մեկնած Բարեկամական խումբը վերադառնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման հավելվածի 145-րդ կետով նախատեսված կարգով ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, ով ուղարկում է Հանձնաժողովի նախագահին: 23. Բարեկամական խմբի վերադառնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, կամ Բարեկամական խմբերը պարտավոր են հանդես գալ կա՛մ ճեպազրույցով կա՛մ մամուլի ասուլիսով, որը կազմակերպում է Ազգային ժողովի աշխատակազմը:

24. Ազգային ժողովի նախագահը Բարեկամական խմբի ղեկավարի առաջարկության հիման վրա հրավիրում է խորհրդակցություններ, որոնց մասնակցում են Հանձնաժողովի նախագահը, բոլոր Բարեկամական խմբերի ղեկավարները՝ Բարեկամական խմբերի գործունեության ընթացքում ծագած խնդիրները քննարկելու կամ Բարեկամական խմբերի գործունեության արդյունքները ամփոփելու և միասնական մոտեցումներ մշակելու համար:

25. Բարեկամական խմբի վերադարձից հետո Ազգային ժողովի նախագահն անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրել Բարեկամական խմբի աշխատանքային խորհրդակցություն Հանձնաժողովի նախագահի մասնակցությամբ, որի ընթացքում Բարեկամական խմբի ղեկավարը հանդես է գալիս հաղորդմամբ:

26. Տեղեկատվության փոխանակման, միջազգային խորհրդարանական կազմակերպություններում համակարգված և արդյունավետ աշխատանք ապահովելու նպատակով Հանձնաժողովի նախագահը, ըստ անհրաժեշտության, հրավիրում է խորհրդակցություն Բարեկամական խմբերի ղեկավարների մասնակցությամբ:

27. Բարեկամական խմբերի գործունեության կազմակերպական, նյութատեխնիկական, ֆինանսական և մասնագիտական-տեղեկատվական ապահովումն իրականացնում է Ազգային ժողովի աշխատակազմը:

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար **Ա.Սաղաթելյան**